

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵԶԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՍԻ ՆՄՈՒՇ / 9-ի բազա/

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

2023թ

1. Ի՞նչ է առաջանում մեկ մայրական բջից միտոզի արդյունքում.

1/ չորս դուստր բջիջներ

2/ մեկ դուստր բջիջ

3/ երկու դուստր բջիջներ

4/ երեք դուստր բջիջներ

2. Ինչպե՞ս են տեղաշարժվում լեյկոցիտները.

1/ փոխադրիչ սպիտակուցների միջոցով

2/ թարթիչների միջոցով

3/ մտրակների միջոցով

4/ կեղծ ոտիկներով

3. Որտե՞ղ կան տեսողական ընկալիչներ.

1/ միջին ուղեղում

2/ ցանցաթաղանթի դեղին բծում

3/ ծիածանաթաղանթում

4/ մեծ կիսագնդերի կեղևի տեսողական գոտում

4. Քլորոպլաստի արտաքին թաղանթը.

1/ առաջացնում է կատարներ

2/ առաջացնում է գրաններ

3/ հարթ է և խորշեր չի առաջացնում

4/ առաջացնում է խոռոչներ

5. Ո՞րն է կազմում մարդու արտաքին ականջի մաս.

1/ մուրճիկը

2/ ականջախեցին

3/ թմբկաթաղանթը

4/ լսողական փողը

6. Մարդու սրտի ո՞ր խոռոչն ունի ամենահաստ պատերը.

1/ ձախ նախասիրտ

2/ աջ նախասիրտ

3/ աջ փորոք

4/ ձախ փորոք

7. Բջջի բաղադրության մեծ մասը կազմում են.

1/ ջուրը և հանքային աղերը

2/ սպիտակուցներն ու լիպիդները

3/ սպիտակուցներն ու նուկլեինաթթուները

4/ ածխաջրերն ու լիպիդները

8. Նշվածներից ո՞րն է բացակայում մարդու գանգում.

1/ շրջոսկրը

2/ կարանը

3/ կակդանը

4/ ակնակապիճը

9. Մարդու ո՞ր հիվանդության ախտանիշներն են այտուցվածությունը, հիշողության

վատացումը, անտարբերությունը միջավայրի նկատմամբ.

1/ ռախիտ

2/ լորձայտուց

3/ բերի-բերի

4/ անգինա

10. Բնչպիսի՞ եղջուրներ չկան մարդու ողնուղեղի լայնակի կտրվածքի վրա.

1/ հետևի

2/ առջևի

3/ կողմնային

4/ իսառը

11. Ինչո՞վ են միանում մարդու ուղեղիկի կիսագնդերը.

- 1/ հիմնային հանգույցով
- 2/ որդանման սպիտակ նյութով
- 3/ կենաց ծառով
- 4/ կամուրջով

12. Ո՞ր ներդրումների մարմիններն են գտնվում մարդու ԿՆՀ-ի ներսում, իսկ արտոնները՝ դրսում.

- 1/ զգայական
- 2/ զգայական և շարժողական
- 3/ ներդիր
- 4/ շարժողական

13. Մարդու գլխուղեղի ո՞ր բաժնում են տեղադրված տեսաթումբը և ենթատեսաթումբը.

- 1/ միջանկյալ ուղեղում
- 2/ ուղեղիկում
- 3/ միջին ուղեղում
- 4/ մեծ կիսագնդերի սպիտակ նյութում

14. Ո՞րն է մարդու կենտրոնական նյարդային համակարգի բարձրագույն բաժինը.

- 1/ ուղեղաբունը
- 2/ միջանկյալ ուղեղը
- 3/ ծայրային ուղեղի կեղևը
- 4/ ողնուղեղը

15. Ինչպե՞ս է կոչվում հատուկ մասնագիտացված զգայական կազմավորումը, որը նյարդային վերջույթների ընդունած գրգիռը վերափոխում է նյարդային ազդակի.

- 1/ գրգռիչ
- 2/ վերլուծիչ

3/ ընկալիչ

4/զգայարան

16. Ո՞ր ընկալիչներն են առավել շատ մարդու մաշկում.

1/ ցավի

2/ սառնության

3/ջերմային

4/ հպման

17. Նշված պնդումներից ո՞րն է բնութագրում պայմանական ռեֆլեքսները.

1/ընդհանուր են բոլոր մարդկանց համար

2/ժառանգվում են

3/մշտական են

4/անհատական են

18.Ի՞նչով է վերջանում ռեֆլեկտոր աղեղը.

1/ընկալիչով

2/ներդիր նեյրոնով

3/գործառող օրգանով

4/զգայական նեյրոնով

19. Ո՞ր մկանների գործունեությունն է կարգավորում վեգետատիվ ն. հ. -ը.

1/ստոծանու

2/լեզվի

3/դեմքի

4/մաշկի

20. Մարդու օրգանիզմի ո՞ր գործընթացին են մասնակցում թրոմբոցիտները.

1/արյան մակարդմանը

2/ անոթների պատերի թափանցելիության մեծացմանը

3/ածխաթթու գազի տեղափոխմանը

4/վարակների դեմ պայքարին

21. Որտե՞ղ են քայքայվում մարդու էրիթրոցիտները.

1/փայծաղում և ավշային հանգույցներու

2/փայծաղում և կարմիր ոսկրածուծում

3/լյարդում և ուրցագեղձում

4/լյարդում և փայծաղում

22. Արյան ո՞ր խումբ ունեցող մարդիկ են համընդհանուր ռեցիպիենտ.

1/երկրորդ

2/երրորդ

3/չորրորդ

4/առաջին

23. Որտե՞ղ են տեղակայված մարդու լսողական ընկալիչները

1/ հիմային թառանթի և կլոր պատուհանի վրա

2/ հիմային թաղանթի վրա

3/ թմբկաթաղանթի վրա

4/ծածկող թաղանթի վրա

24. Որտեղի՞ց է մարդու արյունը լցվում աորտա.

1/աջ նախասրտից

2/ աջ փորոքից

3/ ձախ փոփոքից

4/թոքային զարկերակից

25. Ի՞նչ գործառույթ չի կատարվում քթի խոռոչում.

1/օդի փոշեզերծում

2/օդի տաքացում

3/օդի խոնավացում

4/օդի մեջ եղած հոտերի տարբերակում

26. Ի՞նչն է պատում մարդու թոքերի արտաքին մակերևույթը.

- 1/մազանոթների խիտ ցանցը
- 2/թոքային թոքամզային թաղանթը
- 3/թարթիչավոր էպիթելային հյուսվածքը
- 4/միաշերտ հարթ էպիթելային հյուսվածքը

27. Ի՞նչ գործառույթ է կատարում ցեմենտը.

- 1/ծածկում է ատամն արմատի շրջանում
- 2/լցնում է ատամի խոռոչը
- 3/լցնում է ծնոտների ատամնաբները
- 4/ծածկում է ատամը պսակի շրջանում

28. Որտե՞ղ է սկսվում մարդու օրգանիզմում սպիտակուցների

ֆերմենտային ճեղքումը.

- 1/բարակ աղիում
- 2/բերանի խոռոչում
- 3/ստամոքսում
- 4/հաստ աղիում

29. Որտե՞ղ են գտնվում մարդու մաշկի ընկալիչները.

- 1/ բուն մաշկում
- 2/վերնամաշկում
- 3/միայն ենթամաշկային բջջանքում
- 4/ենթամաշկային բջջանքում և բուն մաշկում

30. Ինչպե՞ս է կոչվում տվյալ հիվանդության թուլացած կամ մահացած

հարուցիչներ պարունակող պատրաստուկը.

- 1/ հակածին
- 2/ բուժիչ շիճուկ
- 3/ հակամարմին

4/վակցինա

31. Պրոկարիոտ բջիջներում ռիբոսոմների ֆունկցիան.

1/ԴՆԹ-ի սինթեզն է

2/ԱԵՖ-ի սինթեզն է

3/ ամինաթթուների սինթեզն է

4/սպիտակուցների սինթեզն է

32. Ի՞նչ է պարունակում կորիզակը.

1/ ՌՆԹ և սպիտակուցներ

2/ ածխաջրեր և ԴՆԹ

3/ ԴՆԹ և սպիտակուցներ

4/ ճարպեր և ՌՆԹ

33. Ո՞րն է թաղանթանյութի(ցելյուլոզի) մոնոմերը.

1/ իիտինը

2/գլյուկոզը

3/գալակտոզը

4/ ֆրուկտոզը

34. Պլազմային թաղանթի գլխավոր ֆունկցիաներից մեկը.

1/նյութերի փոխադրումն է

2/նուկլեինաթթուների սինթեզն է

3/ԱԵՖ-ի սինթեզն է

4/սպիտակուցի սինթեզն է

35. Բջջային շնչառության հետ անմիջական կապ ունեն.

1/վակուոլները

2/միտոքոնդրիումները

3/ լիզոսոմները

4/ էնդոպլազմային ցանցը և պլաստիդները

36. ԴՆԹ-ի սինթեզը բջջում իրականանում է.

1/ինտերֆազի վերջում

2/ ինտերֆազի սկզբում

3/միտոզի ընթացքում

4/ինտերֆազի միջին ժամանակահատվածում

37. Ո՞ր քիմիական տարրն է մտնում բջջի ուլտրամիկրոտարրերի խմբի մեջ.

1/ յոդը

2/ֆտորը

3/ ոսկին

4/ցինկը

38. Ի՞նչն է բնորոշ վիրուսներին.

1/ոչ բջջային կառուցվածքը

2/երկու տեսակի նուկլեինաթթուների առկայությունը

3/ քաղցկեղածնությունը

4/պլազմային թաղանթի առկայությունը

39. Քանի՞ զույգ հակադիր հատկանիշներ են ուսումնասիրվում միահիբրիդ

խաչասերման ժամանակ.

1/ չորս

2/ երկու

3/ մեկ

4/ երեք

40. Ի՞նչ է տեղի ունենում միտոզի պրոֆազում.

1/քրոմոսոմները կաչում են իլիկի թելիկներին

2/ քրոմոսոմները պարուրվում են և կարճանում

3/ քրոմոսոմները սկսում են ապապարուրվել և երկարել

4/ քրոմոսոմները դասավորվում են հասարակածային հարթության վրա

41. Ո՞րն է սեռական բազմացման ձև.

1/ վեգետատիվ բազմացումը

2/բողբոջմամբ բազմացումը

3/ֆրագմենտացումը

4/ կուսածնությունը

42. Փոփոխականության ո՞ր ձևն է ոչ ժառանգական.

1/ կորիզային փոփոխականությունը

2/ ֆենոտիպային փոփոխականությունը

3/համակցական փոփոխականությունը

4/ մուտացիոն փոփոխականությունը

43. Ո՞րն է գենային մուտացիաների էությունը.

1/քրոմոսոմների փոխակերպումներն են

2/ քրոմոսոմների կրկնապատկումն է

3/ քրոմոսոմային ԴՆԹ-ի քիմիական կառուցվածքի վերափոխումն է միայն սեռական բջիջներում

4/ քրոմոսոմային ԴՆԹ-ի քիմիական կառուցվածքի վերափոխումն է

44 . Որտե՞ղ են տեղակայված մարդու սրտի փեղկավոր փականները.

1/նախասրտերի միջև

2/ձախ փորոքի և աորտայի միջև

3/ աջ փորոքի և թոքային զարկերակի միջև

4/ նախասրտերի և փորոքների միջև

45. Ինչո՞վ են միանում միմյանց հողը կազմող ոսկորները.

1/գլխիկով և փոսիկով

2/հողը ծածկող աճառով

3/ աճառային կամ ոսկրային միջնաշերտով

4/ ջլերով

46. Ի՞նչ իմունիտետ է մշակվում, երբ մարդու օրգանիզմ են մտցվում տվյալ հիվանդության թուլացած կամ մահացած հարուցիչները՝ պատվաստուկների ձևով.

- 1/ բնական ձեռքբերովի
- 2/ բնական բնածին
- 3/ արհեստական ակտիվ
- 4/ արհեստական պասիվ

47. Բջջի ո՞ր կառուցվածքում չկան ռիբոսոմներ.

- 1/ Գոլջիի ապարատում
- 2/ քլորոպլաստում
- 3/ միտոքոնդրիումում
- 4/ հատիկավոր էնդոպլազմային ցանցում

48. Ինչպե՞ս են կոչվում օրգանիզմները, որոնց հոմոլոգ քրոմոսոմներում պարունակվում են

միևնույն գենի տարբեր(դոմինանտ և ռեցեսիվ) ալելներ.

- 1/ հետերոզիգոտ
- 2/ հոմոզիգոտ
- 3/ ռեցեսիվ
- 4/ դոմինանտ

49. Սովորաբար ի՞նչ հարաբերությամբ է կենդանի օրգանիզմում տեղի ունենում ճեղքավորում ըստ սեռի.

- 1/ 1:2
- 2/ 3:1
- 3/ 1:2:1
- 4/ 1:1

50. Ո՞րն է գենոտիպի դրսևորման կարևոր պայմանը.

- 1/ արտաքին միջավայրի պայմանները
- 2/ օրգանիզմի տեսակը
- 3/ օրգանիզմի տարիքը
- 4/ օրգանիզմի ֆիզիկական առանձնահատկությունները